


THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԻՊՈԳՐԱԿԱՆ ՍԻՆՏԱԿՆԵՐԸ ՔԱՅ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 71 ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՄԱՐՏ 18 1899 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ԱՂԳԱՅԻՆ

Վերջապես Գարսիէօզեան կառուցողներու Գործակալն Հանկոյցը լուծուած լաւ եւ քանի կարուած կարուուած է 120,000 լիրայի ահագին գումարէն՝ Աղգ. Գարսիէօզեանը 20,000 լիրայ հանկու միւլիտար թիւեր սնեցեր է. մնացած 100,000ը աղգին աւելի աղքատներուն՝ Գարսիէօզեան Հնտանիքին ձգելով։ Աստուած սղարմի աղգին ինկղծուան նուիրուած գումարներուն կարօտ այդ Հնտանիքին։

Որոշուած է որ 5,000 լիրայով որբանոց մը շինուի ու մնացած 15,000 լիրայով կալուածներ գնուին՝ որոց բերած Հասցեովը որբանոցին ծախսերը հոգալուին։ Այդ սղարմի աղգին ձգելով։

Վանկն եկած վերջին լուրերը ահաւելին են։ Այլ թող աղքատ ընդհանուր աղքատութիւնը, մերկութիւնը եւ հարստահարութիւնները, հիմա ժողովրդին անօթութիւնը վերջին ծայր հասած է։ Ետանք սկսեալ են մեռելի անասուցութիւնը։ Այս բոլոր թշուառութիւնները շէտեմէ համար կաթնով կը կըրնենք գործի երէր են, երեսունը վրայ սրբազան ժողովուրդ մը եւ ձեռքերուն մէջ կտոր մը հաց կամ քանի մը դահիկան, կը մտնեն մեր պատու հասնելով զարնուած սղարմելի հայրենակիցներուն եւ զանոնք կրօնափոխութեան կը հրաւիրեն՝ իրենց բարը կ'առաջնորդեն, բաւ մը որոյ գուրը Յիսուսի անունը գրուած է, իսկ ներքը անաէր ժողովրդի մը աղէտները շահագործող գայլերու վոհմակներ կան։ Անդհ հայ ժողովուրդը, Մահմանականները մէկ կերպ կրօնամարտութեամբ կը խոցուան քեզ եւ Բրիտանիայ կոչուած առաքելները ուրիշ կերպ մօլեռանդութիւններով ճանկերին քու արիւնստ վէրքերուդ մէջ կը խոթեն, կը հանեն եւ կը լիզեն զիւրային հաճոյքով մը։ Ո՞վ է ուրեմն այն՝ երկրի մէջ կամ երկրի վրայ, որ քու վէրքերուդ կարեկցութեան կաթիլ մը արցունք սպեղանի պիտի գնէ, որ գթութեան սիրով առ շունչ մը պիտի փշէ քեզի դարման մը տալու։ Ո՞վ է այն որ փրկութեան անձնուէր ձեռք մը պիտի երկնցունէ քեզի...

Ասիէ 4 ամիս առաջ 186 էր զիւզէն շար երկրաշարժ երկրասարդներ, 25 էն 30 տարեկան, կամուրջին վրայ գլխատուեցան թերեւո՛ւց քիւրդերուն ձեռքով։ Քահալի գիւղացի Տէր Ստեփանը նոյնպէս կամուրջին վրայ ընդ երկար շարժարեւելէ ետք երկու կտոր բրած եւ իւրաքանչիւր կտորը կամուրջի մէկ ու միւս կողմէն կախեր են, որոնք անցորդ Հայերուն կը ցուցնեն եւ կ'ըսեն. «Տեսէք, տեսէք, Ձեր բաճանախ անտէք...» Ետանք մը գիւղացիներ սպաննուած եւ Տիգրիսի մէջ նետուած են. ահա այն վրձակը, այն կրակէ օդակները՝ որոց մէջէն կ'անցնին Տիգրանակերտի եւ շրջակայից հայ ժողովուրդը։ Ինչ ընենք, ո՛չ Աստուած կը լսէ մեր լաց ու պաղատանքը ո՛չ մարդ. ուսկի՞ց փրկութեան ձեռք մը պիտի երկարի մեզի։ Օր մը չէ, ամիս մը չէ, տարի մը չէ, ո՛րչափ պիտի կրնանք զիմանալ այս կացութեան. ինչ պիտի ըլլանք։

ՎՇՏԱԿԻՐ

անկողնոյ կը ծառայեն. մեռնողներ ալ եղած են։

Երբ որ եւ է կտոր մը թուղթ կը գտնեն՝ որուն վրայ հայերէն տառեր ըլլան. մանաւանդ եթէ օտար երկրէ եկած նամակ մը եւ կամ եւրոպական տարազով լուսանկար մը ձեռքերին իյնայ, անմիջապէս զանոնք տան սիրով ստորագրել կուտան եւ տան աչքը ու երկրասարդ զուակները, եթէ ունի, կ'առնեն ու բանտը կը տանին, ուր տրուած անձնուքները անկարագրելի են, ու երբ եւ ինչ միջոցներով ազատուելին ո՞վ կրնայ գիտնալ։

Գիւղացիներուն վրձակը շատ աւելի ստեղծել է, որոնք Բիւրզ սպաներու եւ պղկերու գործած վայրագութիւններէն, հարստահարութիւններէն, շարժարեւելներէն ու յափշտակութիւններէն զուլանին կարմնուցած՝ գէպի քողաք կը փախչին, տնօթիմերկ, եւ ծարու պարտիպին տակերը կը թափառին ու կը նընջեն։

Ասիէ 4 ամիս առաջ 186 էր զիւզէն շար երկրաշարժ երկրասարդներ, 25 էն 30 տարեկան, կամուրջին վրայ գլխատուեցան թերեւո՛ւց քիւրդերուն ձեռքով։ Քահալի գիւղացի Տէր Ստեփանը նոյնպէս կամուրջին վրայ ընդ երկար շարժարեւելէ ետք երկու կտոր բրած եւ իւրաքանչիւր կտորը կամուրջի մէկ ու միւս կողմէն կախեր են, որոնք անցորդ Հայերուն կը ցուցնեն եւ կ'ըսեն. «Տեսէք, տեսէք, Ձեր բաճանախ անտէք...» Ետանք մը գիւղացիներ սպաննուած եւ Տիգրիսի մէջ նետուած են. ահա այն վրձակը, այն կրակէ օդակները՝ որոց մէջէն կ'անցնին Տիգրանակերտի եւ շրջակայից հայ ժողովուրդը։ Ինչ ընենք, ո՛չ Աստուած կը լսէ մեր լաց ու պաղատանքը ո՛չ մարդ. ուսկի՞ց փրկութեան ձեռք մը պիտի երկարի մեզի։ Օր մը չէ, ամիս մը չէ, տարի մը չէ, ո՛րչափ պիտի կրնանք զիմանալ այս կացութեան. ինչ պիտի ըլլանք։

ՎՇՏԱԿԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅ ԵՐԹԱԼԸ ՀԱՅՈՑ ՕԳՏԱԿԱՐ ՁԷ

Հայոց Ամերիկայ երթալը կեանքի մի փճացում է։ Խեղճ երկրատարք, դեռ երկար կուզենք քաշել այդ պանդխտութիւնը, ալ բաւական չեն սեպեր. տարիներով զուակներուդ սէրը եւ կարօտը կը քաշես, ինչո՞ւ այդ սիրով Ամերիկայի գործարաններուն մէջ փճանաս, որ մը մարմինդ օտար հողի մէջ թաղուի. եկուր եւ թաղուէ Հայաստանիդ մէջ, անուշիկ Հայաստանիդ մէջ։ Վերցուցէք հայերուն Ամերիկայ եւ եւրոպայ երթալը եւ պիտի տեսնէք որ շատ մը վնասներէ ազատ պիտի ըլլանք, եւ ուրախութեամբ պիտի ունենանք։

Պիտի ըսես. «Ինչպիսի՞ պատանի, ի՞նչ կը հասկնամ հոս...» լուծին տակ մնալէն։ Ետանք աղէկ, բայց չեն ուզեր այդ լուծը սիրելիներուդ հետ միասին կրել, քան թէ Ամերիկայի գործարաններուն մէջ միմիակ կալիս ու մաշիս։ Եթէ գիտուն ես, հոս

գիտուն չես նկատուիր, եւ այսակզի գիտունները հոս չեն կրնար աշխատիլ։

Վերջոյ գրեալը հայրենիքէն վերջերս հոս հասած շարագրութիւն մի է 12 տարեկան պատանի մը զըրուած՝ իր գրական փորձ։ Ուզեցինք զայն հոս դնել, որովհետեւ անոր մէջ շատ գեղեցիկ խորհուրդ մը եւ թելագրութիւն մը կայ, զոր ընթերցողը ինքնին կրնայ տեսնել, եւ որ իւր մանկական սրբագրուած խոսքովը ինքնին սղարմի աղգին եւ զօրուոր կերպով կը դաշի մեր պանդխտ սրտերուն, որ կրնայ իր սղարմար արդիւնքը ունենալ։ Այս շարագրութիւնով ամենուս զուակներուն, մեր սրտի հոտարներուն սիրով առ ձայներն են որ կու գան կր թափանցեն մեր սրտերուն խորքը եւ հոն՝ պարտաճանաչութեան մը հրդեհը կը բռնուցնուեն, եթէ մարդկային զգացումներու վերջին մնացորդ մը իսկ գոյութիւն ունի մեր մէջ։

ՆՈՐ ԿԵՆՆԻՔ

Ամեն անոնք որ Գործակալին հին եւ նոր կեանքին, ազգային ու յեղափոխական գործունէութիւններու անցեալ ու ներկայ ուղղութիւններուն եւ եւրոպական քաղաքականութեան անդեակ ըլլալ խորաթափանց կերպիւ, անոնք որ կը սիրեն իրեն շահեկան զուարճարկներ կարդալ, անոնք որք կը փափաքեն ներկայ ամենահամալիր ու գեղեցիկ գրքերէն արտագրուած փառուոր ծաղիկներով պնեն իրենց միտքը, սիրտը եւ հոգին, անոնք որ կուզեն գրական ճախ ու վնամ ներշնչուեալով գործնական արդիւնքներ կեանք մը ունենալ, «ՆՈՐ ԿԵՆՆԻՔ» ԿԱՐԴԱԼԻՒ ԵՆ։

Նոր կեանքի նիւ Երբքի գործուկարն է Պրն. Անտօն Թագուորեան, եւ հասցէն՝

343 Իոթ 34րդ Փողոց։

Ուղղները շատ մը գիւրութեանց համար կրնան անոր զիմել նամակու կամ անձամբ։

Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ» ձրի կը ղրկուի։

Լծնաղի գործակալութեան հասցէն է՝

L. Frank,
309 Lodbroke Grove London W.

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

ՏԻՊՈԳՐԱԿԱՆ ՏՎԱՐԱՆԸ փոխադրուեցաւ հետեւեալ հասցէին։

Q. B. CHUTJIAN 301 E, 34d St,
Նամակ կամ ծրար ղրկել վերոյիշեալ հասցէին։

ԱՂԱՏ ԼՍԱՐԱՆ

Էլքս 201, Պրոտուէյի եւ 27րդ Փողոցի անկիւնը, նիւ Երբք։

Յառաջիկայ Կիրակի երեկոյ ժամը ճիշդ 8ին Ազատ Լսարանի մէջ պիտի խօսի Տ. Գ. Չիթճեան։

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԱՂԱՏ ԳԱՐՈՁ

Յառաջիկայ Կիրակի սովորական ժողովարարէն մէջ, որ է 19 Ուէսթ 27րդ Փողոց, Պրոտուէյի անկիւնը, էլքս 201, Տ. Գ. Չիթճեան պիտի քարոզէ. նիւթն է «Մարդ՝ այնքան մարդ է որքան կ'զգայ եւ գիտէ»։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԿԱՄ ԱՂԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
(Գրպանի Համար)
Նիւ Երբք, 1899
Հատար Ա.

Կր պարունակէ 250 երկներ եւ 15 գեղեցիկ պատկերներ։ Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ եւ փառաւոր կեցակը կողմուած։

Գրներն են.
Թղթակազմ — — 50 ՍԷՆԹ
Լաթակազմ — — 75 »
Կաշեկազմ — — 1.00 ՏՕՐԱՐ

Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գեղջ կայ։

Գրել, գրամ կամ ծրար ղրկել առ՝

H. Eguinimian,
145 East 23d St, New York City.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԵՒ Յ. ՄԻՍԱԲԵԱՆ
ԸՆԿ. 202 Իոթ 32րդ Փողոց Ն. Ե.

Ի գիտութիւն արեւելեան գորգեր վաճառողաց ու նորոգողաց կը ծանուցանենք թէ՛ գորգերու եղբրները գրուելու նիւթ եւ ամեն գոյներով բուրդ կը վաճառենք շափաւոր գներով։ Երկրորդ՝ մեր օֆիսին մէջ նահանգներէն եկած յանձնարարութիւններն փութով կը կատարենք թէ՛ քաղաքիս եւ թէ՛ Պօլսոյ համար բերելու, ղրկելու, գանձելու, վճարելու, գնելու եւ վաճառելու ամեն գործերը կընենք զիւրաժանաբար պայմաններով։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ըսթերլինի մէջ անցեալ Շաբաթ օր ամուսնացան Տիար Մկրտիչ Մըլիթարեան եւ Օրբորդ Տիկնեան (Տիգրանակերտցի)։ Պատկի արարողութիւնը կատարեց Տէր Վահրամ Բաւահան։

ԶԱԻՇՏԱՍՏՈՒՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ
ՆՈՐԱՅՐԻ

Յառաջիկայ Շաբաթ երեկոյ, Մարտ 18ին. ժամը 7½ին,

Ի Հըտօրն Բաւահանի Լէյպըր Լայսի-իում Թատերասրահին մէջ։

420 — 423; 213 St. west Hoboken N. J.



ՇԱՐԱԹԱՌԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԷՆ ԾԱՐԱԹ ՕՐԵՐ,
ՏԻԳՐԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՐՈՒՄԷՆ:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ - - - - - Խմբագիր

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵՍԱԼ ՆԱՀԱՆԳՈՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	1 50	Տարեկան	10 ֆրանք
Վեցամսեայ	75	Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ	
Եռամսեայ	40	Վճարելի է միշտ:	

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցեին՝
To the DICKENS PUBLISHING CO., 301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՄԱՐՏ 18, 1899.

Ի՞նչ ԸՆԵՆՈՒ ԵՆՔ

Մենք Հայերս շատ բաներ կուզենք, որոց նշանակու-
թիւնը կենսական է և որոնք ազգային գոյութեան լինե-
լու կամ չլինելու խնդիրները կը պարունակեն: Ազգային
ընդհանուր կազմակերպութիւն մը կուզենք, որ ներքին-
ուսած ըլլայ Հայ ժողովրդին ներկայ պահանջներովը, որ
իր մէջ ունենայ ազգային ամեն կարգի ուժերը, ազա-
նաւորը, քաղաքագէտը, հարուստը, երիտասարդութիւնը,
խոհմը և յանդուգնը, խորհողը և կռուողը, դրամը առ-
ողը և իւր կեանքը զոհողը, աշխարհականը ու եկեղեցա-
կանը, պաշտօնեայն ու գործաւորը:

Այս կառուցուելիք շէնքին մէջ աւագը, կիրը և տիր-
մը այնքան կեանք ունենալ են որքան հիմնադրերը, քարերը,
փայտը ու երկաթը: Բոլոր Հայ նշա՛ւսն ու աննշան, ազ-
գային և անազգային, մեծ ու փոքր, զօրաւոր և տկար
տարրերը մէկտեղ գալու են հոն և ամբարկնիք գրկելու են
գիրքը, հոն միանալու են ազգային կեանքի բոլոր առե-
կոյթ հակառակութիւնները, ինչպէս բնութեան մէջ կրա-
կը և ջուրը, շողը և շագը կը միանան ու կեանքը կ'ար-
տադրեն:

Ազգային յեղափոխական մարմին մը ստեղծուելուն
պէտքը ունինք, որը հաշուուած ծրագրով մը, փորձա-
ռութեան վրայ հիմնուած քաղաքականութիւնով մը, հըմ-
տութեան լուսովը ճշդուած ուղղութիւնով մը, լրջու-
թեամբ սանձահարուած եռանդով մը, խոհմութեամբ
կառավարուած թափով մը, պաշարելուութիւնով ղեկավար-
ուած ոգևորութիւնով մը, իմաստուն զոհարելութիւններ
ով, ծայրայեղ գաղտնապահութիւնով գործել՝ և անգործ
երևնալ, յատարասել՝ և անտարբեր նկատուել, ի մի
բան՝ խորագիտութեան բոլոր արտաքին հակառակութիւննե-
րովը առաջնորդէ ազգը և ազգային բոլոր ուժերը և արա-
մադրութիւնները դէպի վճռական ճակատամարտը՝ երբ
ճշմարիտ պատեհութեան փայլին ձայնովը Հայ ժողովուր-
դը պարտի իւր բազմաբնոյ հարուստը աւալ և տիրանալ ին-
չի որ կրնայ:

Ժամանակը հասած է՝ եթէ արդէն շատ ուշ է, որ
առին Հայ ըմբռնէ ահաւոր իրականութիւնը: Ամեն բան
կորուստ է. ստիպելի կերպով սուսեցինք՝ անփորձու-
թիւնով, յատուած գործունէութեամբ և ձեռնպահութիւն-
ներով: Ահաւոր փորձառութեան առջեւ հիստիստիկալ,
մեր յեղափոխական գործունէութիւնը եղանակաւորելու
և ձեռնպահ կեցողներուն ալ գործի ձեռնամուխ ըլլալու
սրտազան կաշը կայ այսօր: Այս հրաւերին առջեւ խոհմը
անտարբեր կեցողը կը դառնան Հայրենիքին և կը մե-
ղանչէ մեր այնքան թարմ նահատակներուն դէմ: Այս
ազգային մահու և կենաց ճիւղին ու ճշմարտութեան
ձեռնպահ կեցողներն այնքան մեղադրելի են՝ որքան շին-
փորձառութեան ու խոհմութեան դէմ մեղանշող յեղա-
փոխականները՝ որոնք սակայն՝ նոյնքան պատճառ կը լինան
մեր սիրելի ազգին խղիւղ բնաշնչումին:

Մէկ կողմէն քննելով բռնուած ու անեղծ վարուած
յեղափոխականներն պարտին լրջանալ, մտածել ու գիտ-
նալ թէ գրգռուել, իրարանցումը և ազմուկը կազմա-
կերպութեան մը հիւանդութիւնը և տկարութիւնը երեան
կը բերեն, որոնք աղէտարիւր ըլլալէ զատ ուրիշ բանի չեն
ձառայեր: Մեզի ամենուս յայտնի է թէ Հայկական Գոր-
դիւնու պարտութիւններն անկէ ետքը Անգլիոյ քաղաքական ինչ
պէս գլուխը ներս քաշելով անգլի կուստար Ռուսիոյ հար-
ուածներուն առջեւ: Սակայն այդ նախարարացեալը իւր
պարտութեան երեւոյթներուն առիւթն էր որքան իւր
զլլուած վրայ անգղացող նախախնդներուն և անարգանքնե-
րուն կարեւորութիւնը շատ լուրջ—լու ու անձայն կը գործէր՝
մինչև որ՝ առանց իւր պետութիւնը վտանգի մը ենթար-
կելու՝ այնպիսի յաղաղութիւններ ու յաղթանակներ ձեռք
բերու Չինաստանի մէջ՝ զորս Լոնտոնի «Սփիքը» վերջնա-

մեծ ցնծութիւնով և հպարտութիւնով կը թուէր, մինչև
որ Ռուսիա ինքը սկսեց տեղի տալ Լորդ Սալդայերի առջեւ
Չինաստանի այս վերջին խնդիրներուն մէջ: Ահա՛ թէ այս
գարուս յաղթանակները ինչպէս կը տարուին: Նոյն կեր-
պով պէտք է շարժին մեր յեղափոխականները, համոզուե-
լով թէ քաղաքական յաղթանակներու ամենէն մեծ զէն-
քերը, առաւել զօրաւոր քան անգլիական մարտանաւերը,
Քրուփի թնթանոթները և անթիւ գօրայ բանակները—են,
խորագիտութիւնը և խորամտնութիւնը: Միւս կողմէն
մեր այն ազգայինները որ արհամարհանք մը և զղուանք մը
ունին դէպի յեղափոխականութիւնը և յեղափոխականը,
գիտնալու են թէ այդ վարմունքով կը պղծեն Հն գերագնաց
սրբութիւնը—պատմութեան, փրկութեան, յառաջիմու-
թեան և լուսաւորութեան սեղանները և անոնց վրայի զո-
հերը, դիւցազունները, հերոսները, մարտիրոսները, նա-
հատակները, խաչը և խաչակը:—Յեղափոխութիւնը այն
փրկարար երրորդութիւնն է, ազատութեան արարչը՝ ո-
րուն մէջ միացած են հարստահարալին աղերսը, կարիճին
անձնագոհութիւնը և Աստուծոյ կամքը: Այս աշխարհի
աստուծոյն առջեւ պատկառանքով կանգնելու և անոր
պատուանդանին առջեւ սրտանուէր զոհեր թափելու են:
Աշխարհի բոլոր ազատագրութիւնները այսպիսով միայն
ձեռք բերուած են. և ընդհակառակն գերութեան շղթա-
ներուն տակ կեցեր ու հեծեր են անոնք՝ որոնք անարդար են
յեղափոխութիւնը և յեղափոխականը: Կրակին սխալ գոր-
ծածութեան հետեւանքը երբէք անոր արժէքին չի հասնի:
այնպէս ալ յեղափոխութիւնը անփորձ ու անխոհեմ անձե-
րու ձեռքին մէջ փնտրակար դառնալով իւր որդութեանը
հիւլէի շափ արատ չգար: Եթէ հերեմի կրակը գործածեցինք
սուները հրէքէի տալով, այժմ գործած ենք՝ անով բազմա-
ուսած լարիքները յառաջ բերելու:

Ինչո՞ւ այնքան խոստ կերպով կը քննադատենք Հայ յե-
ղափոխականներու անցեալը կըր երիտասարդութիւնը իւր
խանդավառութիւններուն մէջ միմեկ թողուցու. ոչ Հայ
քաղաքագէտը, ոչ ազգայինը, ոչ հարուստը ու ոչ ալ փոք-
ձառուն համակրեցան անոր՝ ալ ընդհակառակն նախա-
ցին, անարգեցին և հալածեցին զայն: Ահա յայտնաւոր ալ ե-
ղաւ՝ ինչ որ բնական է: Արդ ժամանակ չէ՞ որ Հայրենի
բոլոր ուժերը ուղղուին մէկ կէտի: Հայ ժողովուրդը իր ներ-
կայ ահռելի իրականութիւնէ փրկելու խնդրին, ամեն ոք
հարցունէ ի՞նչ ընենք:

Երբ գտակ մը հիւանդ է, անոր մայրը կրնայ ամէն իւր-
նամբ տանիլ անոր, սակայն երբ մէկ բան կը վառնայ անիչ,
բժիշկը կանչելը, դեղ մը գարման մը տալը, երբ մեռնի այն,
անոր սպանողն է. այնպէս ալ այն ազգայինները որ իր ճիւղ-
ներն հանգստացնելու համար մէկ մէկ գործ կը գտնեն— որը
նաեւ ըլլայ պաշտօնապէս պատուաւոր, անվտանգ և հան-
գիտ—եկեղեցոյ մէջ պատարագ կը մատուցանեն, քարոզ
կուսան, ժողովուրդին հոգեւոր վիճակը կը հարցնեն, ազ-
քատախնամ, որբախնամ, բարեխոսական ընկերութիւննե-
րու, հոգաբարձութիւններու կանգամակցին, այդ ամենը
շատ ազգի կ'ընեն, սակայն զիտնալու են թէ գործիք ի՞նչ
է որ այս բաները այսպէս կատարուած են ու կը կատարուին՝
բայց են այնպէս ազգը կործանարար հեղեղ մը խլուած
քարէ քար կը զարնուի և կործանուի մէկ կործանում կեր-
թոյ, ու Հայ ուժ մը որ գայն փրկէ: Այդ ուժը ուսկի՞ց
պիտի գայ. ո՞վ զանիկայ յառաջ բերելու է. ազգը բնա-
ջնջումէ փրկելու գործը որո՞ւ պարտականութիւնն է. ե-
թէ ամենքն ալ «գործ գործ ենք» բռնով՝ վարդ քաղելու
երթան՝ ցորենին արաւ որո՞նք պիտի հնձեն. կամ թէ հի-
ւանդը ի՞նչ ընէ հացը, հանգերձը և մայրական սաք համ-
բոյրները կըր դեղը չկայ, գարմանը չկայ, բժիշկը չկայ
կը կրկնեմ ու կը վերջացունենմ, ազգին մարմնոյ վրայ
բացուած մահառիթ խոցերը բուժելու վրայ որո՞նք կը
խորհին կամ որո՞նք պէտք է խորհին: Ե՛րբ Հայ տաղան-
քը, Հայ քաղաքագիտութիւնը, Հայ քաղաքագէտը, Հայ նիւթա-
կան, մատաւարական ու բարոյական բոլոր ուժերը փրկու-
թառնուած՝ Հայաստանի փրկութեան հրեշտակը պիտի
մարմնացունեն:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Տանեկիններորդ գարը իւր վերջնաօրոյն սպառնա-
թիւններովը կերելի ահագին յեղաշրջումներ յառաջ պիտի
բերէ: Երէկ Անգլիոյ էր որ Ռուսիոյ առջև տեղի կուտար,
այսօր Ռուսիոյ է որ Անգլիոյ առջև կը զիջանի և թող կու-
տայ որ Չինաստանի մէջ վերջինս իւր պահանջները ուղա-
ծին պէս կարգադրէ՝ հակառակ առաջնայն շահերուն և քա-
ղաքականութեան: Իստալիոյ Չինաստանէն ընկիւք գրաւու-
մին վրայ կը պնդէ, և Արտաքին գործոց նախարարը բա-
նախօսութեան մը մէջ կըսէ՝ Անգլիոյ ու Չարուն մեզի կըռ-
նակ ունեցեր ենք սկիզբէն, և անգլին Անգլիոյ փարլամեն-
թին արտաքին գործոց պաշտօնատան Գարսալապը պա-
տուխտանի մը մէջ իտալիան «Մեր Գաշնակիցը» կանուանէ:
Չինեկեցութեան համաժողովն տեղի պիտի ունենայ Հո-
լանտայի մայրաքաղաքը Մայիս 18ին: Որքան որ շատեր ան-
հետեւանք բան մը կը համարեն զայն. մենք վստահ ենք որ
անկէ լաւ կամ յոռի՝ յեղաշրջում մը մեծ ազդեցութիւ-
նը յառաջ պիտի գայ: Ծարտնի կայսրը՝ նախարարական ժո-
ղովին առջև գրեր է՝ Պետական կրօնքի տեղ Գրիստոնէ-
ութիւնն ընդունելու առաջարկը:

ԻՆՉՈՒ ԴԵՆՈՒ ՑՈՑՑԵՐԸ ԿԸ ՍԻՐԵՆՔ

Յեղափոխութեան պղտիկ անցեալ
մը ունինք. երբ ցոյցերն իրենց դերը
լիովին կատարեցին, որոնք նոյն ա-
տեն սուղ փորձառութիւն մը և սու-
կալի իրականութիւն մը ձգեցին ի-
րենց ետէն. որոյ վրայ երբ ինչա-
մասորէն կը նայինք՝ կ'ըսենք, այլ ևս
պէտք չեն ցոյցերը, գէթ ներկայիս:
Այժմ ցոյցերը վնասարար կ'ըլլան, ոչ
միայն Կ. Պոլսոյ, Վասպուրականի և
ուրիշ Հայկական գաւառներու՝ այլ
նաեւ արաստահմանի լրագրիւններուն
մէջ և բեմերուն վրայ:

Կար ստեն մը երբ ժողովուրդը
ոգևորուելու համար՝ աստիճանները
բեմերուն վրայէն այնպիսի ձեւեր ու
բացառանշուութիւններ կ'ընէին, զորս
հիմա կրկնելու կ'ամաչեն: Փորձը
ցուցուց որ շինուող ուղևորութիւննե-
րը շուտով կանցնին, և նոյն ստեն
հակազդեցութիւնով մը՝ թմրու-
թիւն, անտարբերութիւն ու թերա-
հաւատութիւն կը պատճառեն ժողո-
վուրդին: Լուրջ և պաշարիւն գոր-
ծունէութեան մը շրջան մտած ենք,
որ նշանաբան մը գրուած է. «Չա-
սիք, կ'ըսէ և բոս այնմ գործադ-
րել»: Ռուսի սրբան անվայել է այ-
ժմ բեմէն դէնք մը ցուցնել ժո-
ղովուրդին. «Երկու ամիսէն պիտի
երթանք» գոչել: Երկու ամիսը կը
անցնի, կ'անցնի երկու ամիսը ալ՝ և
տակաւին Հոս են գայողները: Ին-
չո՞ւ ըսուին բաներ որոնք ուղղամը-
սութիւնով չեն և որոյ գործադ-
րութիւնը կարելի չէ: Ես չեմ հա-
ւատար գործունէութեան մը՝ որ չը
բոյսիք ժողովուրդին համոզումէն և
գիտակցութեանէն: Ինչ կ'ընէ այն ար-
ուեստական ուղևորութիւնն որ ժո-
ղովուրդը կուենայ ժողովարարին
մէջ՝ ցոյցեր և անիրականանալի
խոստանքներ ազդեցութեան տակ,
սրբ գուրս ելածին պէս՝ ծաղիկի մը
նման կը թառամի և կը շորնայ: Ժո-
ղովուրդին թէ՛ աշխարհական և թէ՛
կեցրական ստաճանաբանները շանալու
են ոգևորել և ի գործ մղել զայն,
անոր գիտակցութեանը մէջ սերմա-
նելով պարտականութիւններու լուրջ
և գործնական խորհուրդներ, յարժա-
մ փոքրուրդը պիտի նուիրուի գործին
անձնուրուրդ համար և իւր գրամը
պիտի սայ սիրալոյսով, փոխանակ
զանոնք նետելու՝ փորձանքէ մը ա-
զատուելու պէս:

Հիմա ժողովուրդը ա, բ, գ ի
պէս գիտէ թէ երբ յեղափոխական-
ները դրամ կը հանդանակեն՝ ի՞նչ
բանի համար է. ուսուի աւելորդ է
բարձրաձայն հռչակել թէ «Չ... պի-
տի առնենք», այս ու այն պիտի ը-
նենք»: Սովորեք ուրեմն լուր՝ ուր
պէտք է լուր, ցած խօսիլ՝ ուր խոր-
հրդապահութիւնը այդպէս կը պա-
հանջէ և ժողովրդեան առջև կանգ-
նել ու պարտութիւնով և վեհանա-
նօրէն:

Հօրէնս ԱՆԵՐԵՆՈՑԹ

Պ Ա Տ Ա Ս Ս Ա Ն Ն Ե Ր

Ֆ. Փ. Բօչէսթըր—ՏԻԳՐԻՍԸ կը
ստանաք այսուհետև շարունակ: Ա-
նահիտ ձեռքէ չենք վաճառեր այլևս:
Ս. Բ. Յ. Բ. Նիւ Պրեր Գորթ—
Ձեր զրկանք ստացուած է: Աւելցած
թերթերուն համար կը գրենք:
Ս. Ճ. Հ. Թրոյ—Ստացած ենք:
Պ. Ա. Թերթը կը շրկենք: Իւր վը-
ճարածը մեզ հասած է. թող մնաց-
եալը ձեզ վճարէ:
Գ. Ա. Պ.—Ձեր զրկանք ստացած
ենք: Անահիտի բաժնեկիւր Փարիզ
զրկեցէք:
Բ. Կ. Վոլթամ—Ձեր բաժանոր-
դագրին անցեալ թուով լրացու: Վե-
հետեւի գրոց ցուցակէն չունինք այժմ:
Ս. Ա. Ս. Ընդարձ—Ձեր թերթը
կը շրկենք շարունակ:
Ճ. Ա. Պոթըր—Ձեր ուղած
ցանկը չունինք:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵՐԻՆ ՆԵՐՍԻՍԻ

(Շարունակութիւն եւ վերջ)

Վարագոյրը բացուեցաւ. Սրբազանը կը ննջէր անհանգիստ կերպով, և եթէ իրական քունը ըլլար՝ անշուշտ ամբողջ վար պիտի լինար: Պաշտօնին անջամ աւելի ևս սկսած էր, ուշադրութիւն կը զննէր, բայց կարծես ամենքն ալ վախ մ'ունէին և սեղի չէին տար որ հակառակ բան մը նշանակեմ: Չարմանդուխտ լաւ կարտասանէր և գերն ալ լաւ կը կատարէր, այլ անտեղի ժողովներ կը նշմարուէին երբեմն գէմքին վրայ: Սրբազանը լաւ էր իր գերին մէջ, բայց անտակ մը զարմանալի քայլեր կ'առնուէր որպէս թէ՛ ոտնացալի ենթակայ եղած կամ բեկեռի վրայ կոխուէր որ: Սրբազանին մեկնելէն յետոյ՝ բեմը բաւական ժամանակ պարապ մնաց, մինչև որ Գաւան հասաւ: Առաջին արարուածի քննադատութիւնը նպատակաւոր էին. ես ալ գոհ էի որ ուրիշներ ալ ինձ նման կը մտածէին: Իսկապէս միջոցին յանկարծ մեր ապագայ թագուհի Չարմանդուխտը իրեն հետեղ կերպով պատուոյ տրիւններով՝ զգեստաւորեալ, որպէս երեցած էր բեմին վրայ, թափաբարձրութեամբ մէջ ծաղիկ կը ներկայացնէր տրիւնին, գոնէ մենք այնպէս ենթադրեցինք. բայց սենսնք որ ծաղիկի առեւտուրը կընէր՝ ինչպստ երկկոյթի հասցիովը. նպատակը լաւ էր, բայց միջոցը... որո՞նք որ ալ ըլլայ, սխալ էր. այլ էր թէ՛ բացէն երկու օրիորդներ այդ պատճառը կատարէին, բայց ոչ դերասանական խմբէն և մանաւանդ թեմի հագուստներով:

Երկրորդ արարուածը նորէն լաւ էր. բայց թէնդոս կայսրը, կը տեսնուէր որ կը նեղանար՝ իր գերը լաւ սերտած ըլլալը գիտնալով, ալէն, ձախէն երկու յուշարարներու մէջ տեղ չը շուարեւոր գիտակցութեամբ տանջանքէն: Չարմանդուխտ՝ իւր ամուսնոյն Պապէն բաժանման առթիւ՝ բնաւ ո՛չ ձեւերով և ո՛չ ալ գիմարը վրայ վշտի նշան ցոյց տուաւ. կ'արաստանէր միայն:

Երրորդ արարուածը դարձեալ լաւ էր, բայց մեր Տերեւտիանոս՝ կերպարանքով և մանաւանդ գիմարը վայելուչ զօրավարի մը բոլոր հանգամանքները կը վայելէր, սակայն իր արտասանութիւնը և շարժումները իր գերին չէին համապատասխաներ. կորով բոլորովին կը պակսէր, թուրն ալ փոխանակ կողէն կարծած լինելու ակնոցի նման վզէն էր կարծած, այնպէս որ թուրին կոթը ծնոտին էր մտնեցած: Թշնամուցն յառաջխաղացութիւնը ծանուցանելու պաշտօն ունեցող վաղարջ՝ խիտ, մացառանման, կեճոտ ու երկար մազերով վանդակէ փախած առեւծի մը նման յանկարծ ծուռկած նետուեցաւ բեմին վրայ, ըստ ու անցաւ: Իսկ Սմբատայ շափաղանց շարժումները Մերութեանց կեղծամը գլխէն իրելով բեմին վրայ թողուցին, բարեբաղդաբար մեր այս Մերութեանը ճաղատ չէր. ուսէն պինդ բռնած՝ քշեց ըլլար՝ բեմին վրայ այս արկածը սեղի չէր ունենար, որով էկինեանի ալ բեմին վրայ գալ ու կեղծամը վերցնելն աւելորդ կըլլար:

Կոտտանք՝ Յոյն հրամանատարը, իր գերը տու հատարակ բաւական յաջողութեամբ կատարեց:

Մուշեղ, որմէ երկու ունէի, լաւ էր նա ալ, մանաւանդ թագը ներկայացուցած միջոցին և շարժմանը մէջ. ձայնն ալ սուղ էր: Սմբատայ շարժմանց մէջ սեղ տեղ շափաղանցութիւններ կային, իբր Հա-

յոց բանակի ընդհանուր զօրապետ՝ վճռական պէտք էին լինել, մանաւանդ իր ձեռքի շարժումները. մինչդեռ նա՝ խոսած ժամանակ ալ ձեռքի բթամտը դէպի ետև ծռած և դէպի աջ ուսը տար ու բերով՝ Պոլսոյ շուկայի խանութի պաններու խոսակցութեանց կերպորան կուտար իր ասացուածոց, սաղափարտն ալ գըլխուն մեծ լինելով միշտ անով ըզբաղելու պարտաւոր կղզար, և կարծեմ միևնոյն պատճառաւ ալ վերջին արարուածին մէջ ներսի մարմնոյն վրայ չի նկատ՝ սաղաւարը հանեց, դրաւ սեղանին վրայ և յետոյ ըստ իր «Վերջապէս»ը: Պապ՝ անշուշտ իր գերին մէջ լաւ էր, բայց իր ծունկերուն մէջ կարծես զոպանակ կար, որով իր բոլոր քայլերն տարօրինակ ցնցումներու կամ տեսակ մը ստուգմանով կ'ենթարկուէին ծայրէն մինչև վերջը:

Ներսէս ալ լաւ էր և ուշադրութիւն իսկ էր ըրած իր արտասանութեան մէջ Բարձր Հայոց հնչումն դործածել: Ընդհանուր առմամբ, խաղը խիտ լաւ ներկայացուցաւ, և կրնանք ըսել թէ՛ իր տեսակին մէջ առաջինն էր այս նոր գաղութի մէջ և մեր գիտողութիւնը անշուշտ ներկի են լինելի՝ նկատելով Գերասանական խմբին արտեստանքը հանգամանքը և այս առաջին փորձը: Հագուստներն ալ պատշաճ և ընտիր էին, և եթէ բեմն ալ բուն թատերաբեմ մը լինէր, ասով շատ մը վարագոյններու փոփոխութիւններ և այլ կարգադրութիւններ ի մէջ ածելով՝ արպատութիւնն ալ ըստ այնմ մեծ կըլլար. և այնպէս Պապ թագաւորի ձաշի սեղանը, առանց ճրագներու, առանց ուտելիքի և պարտական սեղանի վայելուչ զարդերու, իցանք բաց, կէս առ կէս լեցուն շիշ մը բերուելով՝ պարզ բուսակներու սեղան չէր դառնար:

Ուրեքութիւնը լրանալէն յետոյ, մէկը՝ վարագուրին մէջ սեղի ձեղքէն դուրս եկաւ իր ամենօրեայ զգեստովը, երկու ձեռքը ետին գըլխարկը բռնած, սաքերն ալ խոշոր կոշիկներով, որոնք չէին փայլէր, կէս ժամ դադար լինելը ծանուցանելու եկած էր. բայց անոնք որք այս կարգի երկկոյթներու վարժ էին, սկսան դիտել տալ թէ՛ բեմի վրայ երևցողը «Փուլ տրէն» կը հագնէր, բրէնն ալ պէրթը բռնած ձեռք և հագուստ եւ փայլուն կոշիկներ:

Ուրիշի մը համար ալ նմանօրինակ գիտողութիւն եղաւ որ՝ կրկնազգեստն իսկ հաղած և օձիքներն ալ մինչև ականջները բարձրացուցած, մազերն ալ չ'սանարած՝ բեմն ելաւ. քունէն ելնող մը նման, ծանուցանելու թէ՛ մինչև ժամը 1 կրնայինք մնալ հոն և պարել ալ. թէ՛ չնորհակալ էին դերասանները հանդիսականաց քննատական ծափահարութեանց համար:

Իսկապէս միջոցին Ամբակում աղան ծանուցեալ գուարճալի ճառը սկսաւ, ժողովրդեան և հանդիսի ներկայանալու ամեն վայելուչ ըզգեստներով և կերպարանք. բայց նա՝ շատ մեծ մարդոց մէջ է մտեր ըսին՝ անշուշտ պէտք է գիտնայ այդ պատշաճօր օրէնքները: Ամբակում աղան ամբերկացոց հետեւելով՝ ասքիէն անդէն իրողութիւններու հաւաքածոյ մը դարձուցած կերակրի իր ճառ ըսածը. շատ շիտակ և շահեկան բաներ սկսանք խել, երբ վարագուրին ետեւէն գերերին կատարող դերասաններու խումբը անհամբերութեան նշաններ սկսան ցոյց տալ, ձայններն ալ սկսան բարձրանալ, «կարճ կապէ՛» ի գոչումներով. 3 օր կը տե՛ն այդ եթէ ամբողջ կարգաք

կըսէին. իսկ Ամբակում աղան կը վարանար բնապէս. քուէի կը դնեմ կը գոչէր, իսկ վարագուրի ետև գըլխուղները կատարած կերակրէն: Գոնէ սա վերջին աղօթքը կարգում ձեզ ըսելով՝ շատ մը խոշոր երեսներ կը թղթատէր, որով ծիծաղներու և մըտիկ ընենքներու աղմկին մէջ Ամբակում աղային ձայնը կորսուելով՝ ստիպուեցաւ խիտ ցատկոտութեամբ և մ'ամուսնով բեմէն վար իջնալ:

Հանգիստակարգ Յանձնախումբը մեղաւոր չէ՞ այս անպատշաճ տեսարանին, ինչո՞ւ կանխաւ ստուգած չէր թէ որքան կը անէր Ամբակում աղային խօսելիքը. ըստ մեզ՝ Յանձնախումբը ներսուցութիւն մը պարտական է Ամբակում աղային. իսկ ի՞նչ կար աճապարեւը, ի՞նչ ունէին անոր փոխարէն, ծանուցեալ կատակերգութիւն մը, որ պարզապէս մընջկատակութիւն (բանթօմիմ) էր. մտացեր էին որ հրաշքերով ընդհանրապէս շափահաններ պիտի լինէին և մի քանի փոքր աղայոց ու ալայ մարդոց ծիծաղը շարեւէ համար չէր արժեք այդ անհամ բանը ներկայացնել, որ ի մէջ կոչուեցանք անգլիս մասը բոլորովին անհամ եղաւ և կորսնցուց ողբերգութեան թողուցած լաւ տպաւորութիւնը: Իսկ հանդիսատես ժողովուրդը իր թերութիւնները նորէն ցոյց տուաւ. նախ որ խիտ անհամբեր՝ կուզէր որ վարագոյնները մէկմէկու ետեւէ բացուէին: Երաժշտութեան ճաշակ չունենալին կրկին ապացուցին, որովհետև մինչև իսկ երաժշտական խմբին լաւ կտորներ նուագած միջոցին՝ վարագուրի բացում կը պահանջէին սուրելով և ծափերով, իսկ արարուածներու մէջ հոն՝ ուր լուրջ մնալ հարկ էր կը խնդային, հոն ուր լուռ մնալ կամ ծափել հարկ էր՝ կը ծիծաղէին և կը ծափահարէին:

Թատրոնները կենդանի դարձան եւ շանք մեր ամեն թերութիւնները ուղղել այս կրթական երկկոյթներուն առթիւ:

Տքթ. Յ. ԱՐՇԱԿՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ԼՕՐԵՆՍԵՆ

Լօրէնի Հայ գաղութը՝ արեւին ճառագայթներուն առջև փայլող գարնանային ծաղիկներուն պէս սկսեց խոյտալ: Մէկ կողմէն Յեղ. հրապարակային ժողովը, մէկ կողմէն գրադարանի յաջողութեան համար անդու ջանքեր և միւս կողմէն լրատանի մը հաստատութիւնը սեղի կուենան: Անցեալ շաբթու լտարանի ժողովին մէջ խօսեցաւ Տիրար Ս. Յովնէիսեան՝ նիւթ ունենալով «Արտաքերն և ներքին Ամերիկայի նկարագրը»: Ներկայից շատ գոհ սրտով մեկնեցան:

Ա. Զ. Դ

Տքթ. Յ. Հ. Մաթոսեան կը ծանուցանէ թէ՛ իր հին օֆիսէն, որ էր 122 իսթ 28րդ Փողոց, տեղափոխուած է 94 Լէքսինգթըն Ալիւի, 26 և 27րդ փողոցներուն մէջ: Ն. Ե.:

ՄԱՄԻԿՈՒՆԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՄԱՐՆ 24 և 26 Արչ Ըսթրիտ, Ուսթըր

Այս առաջնակարգ ճաշարանին մէջ կշտանալու ջափ առատօրէն շատ համեղ ու ընտիր ճաշեր կուտանք, և աղքատները ճիւղ կը կերակրենք: Այս ընկալածով միշտ շարունակելու կարող եմ՝ չնորհիւ չարձախորդներու: Մէկ փորձը բաւական պիտի ըլլայ ամեն ոք գոհ ընելու:

ՁԵՆՆԿԵՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՈՂՈՎԸ

Ձեննկեցութեան համագումարում մը հրաւերին մէջ Չարին ունեցած թագուս նպատակը չէ որ մեզ այնքան կը հետաքրքրէ որքան թէ այդ ժողովը պիտի զբաղի Պէրլինի վեհաժողովին պէս շատ մը բարդ ու կեճոտ խնդիրներ լուծելու, որոց մէջ շատ մը գերի սղգերու ճակատագիրը պիտի որոշուի:

Յարմար առիթ կը համարիմ որ Ամերիկայի Հայերս տեղացիներու հետ միացած ընդհանուր ժողովներ գումարենք, որոշումներ քուէարկենք և մեր դատը ջանանք յիշեալ վեհաժողովին առջև դնել կամ Միացեալ Նահանգաց կառավարութեան և կամ այլ յարմար միջոցներով:

Հայրենիքին մէջ յեղափոխութեամբ ցուցուցինք թէ դժգոհ ենք տիրող կառավարութեան. իսկ արդ ժամանակն է որ եւրոպական պետութեանց վեհաժողովին առջև մեր պատճառները դնենք ու միանգամայն հասկցուենք անոնց թէ մենք մեր խնդիրն իրագործեալ լուծուելուն փափաքող ենք:

Խաղաղութեան վեհաժողովը պարտի գիտնալ նաև թէ՛, հիմնական խաղաղութիւն հաստատելու կարեւոր պայմանն է գոհացում առ զժգոհ տարրերուն, որոց դժբախտ վիճակը զիրենք խաղաղ չկրնար թողուլ, և այս վրդովեալ տարրերուն մէջ Հայերս մեր դատը և դերը ունինք: Պօսիմն. ԱՊՏԱԿ

ՏԵՐ.

Կը խնդրենք որ հազիք Չեր... թերթին մէջ տեղ մը շնորհել հետեւեալ ծանուցադրին:

Ճըրզի Հայ գաղութականութիւնը իւր առաջին պարտականութիւնը համարեց Ուէսթ Հոպոքընի մէջ իր 50ի չափ երկսես մանուկներուն համար ծաղկոց մ'ունենալ, որ մեր մանուկները դաստիարակուին մայրենի լեզուով, հայրենի աւանդութիւններով ու յիշատակներով մէկտեղ: Այս նպատակաւ 96 Յունվար 29ին ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ, ուր մեծամասնութեան քուէով 5 անձերէ բաղկացած խնամակալութիւն մը ընտրուեցաւ, որ պիտի աշխատի առաջադրեալ ծրագրին գործադրութեանը:

Արդ, կուզանք դիմում մը ընել հայութեան ապագան մտածող անձերու, որոնք կամար նուէրներով և կամ շարքակալն 10 սէնթի բաժնիկներով հաճին ձեռնառու ըլլալ մեր սոյն աղբօգուտ ձեռնարկին:

Ծաղկոցը պիտի բանանք՝ երբ նախնական ծախքերու ապահովութիւն մը երաշխաւորուի: Լիայոյս ենք թէ մեր մէջ քիչ չեն կարող ու աղքատներ հայրենակիցներ՝ որոնք Հայ մանուկները օտարախալ փրկելու նախանձանքներով իննով մը վտառած հայկական կրթութեան ջանքն մէջ մէկ մէկ կաթիլ իւր պիտի լեցնեն:

Անոնք որ պիտի հաճին նուէրներ տալ կամ բաժնիներ գրուիլ, կրնան յղել Յանձնախումբի Գանձապետին, որոյ հասցէն է՝

Mr. H. Proudian
632 Elm St. West Hoboken N. J.
Ի Դիմաց Խնամակալ Յանձնախումբի
Առեւտրային Առեւտրային
Կ. ՊԱՍՄԱՃԵԱՆ Մ. ՃԵՆԱՋԻԱՆ

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

231 իսթ 28րդ փողոցի նպարավաճառի խանութին մէջ ի միջի այլոց՝ կը վաճառեմ պուլուր փափաքը 4 սէնթի, ծեծած՝ 5 սէնթի և գառան միս՝ 6 սէնթի փափաքը: ՄԵՍՐՈՊ ԳԱՋԱՆՃԵԱՆ (Բայուցի)

